արդէն խակ վճռուած էր Ապպիուսի դալուց շատ առաջ։ Տիգրանը, որ ոչ միայն զինու զօրութեամբ, այլ եւ քաղաքագէտի իր արտակարգ կարողութիւններով յաջողացել էր գրեթէ ողջ Փոքր Ասիան՝ Միջագետքով իր իշխանութեան տակ առնել, այնքան անխոհեմ ու անհեռատես չէր լինի որ հեշտութեամբ իր պետութիւնը վտանգի ենթարկէր Միհրդատի համար, թէկուզ նա լինէր իր սիրելի կնոջ՝ Կլէոպատրայի հայրը։

Ազգերի մեծ բախումները անհատների քմահաճոյքներից չեն ծագում, եւ ոչ էլ մէկի սիրուն. Տրովադայի պատերազմը՝ որպէս թէ գեղանի Հեղինէի համար, մարդկութեան մանկութիւնն օրօրող սիրուն առասպել է։ Պատերազմների իսկական պատճառները վրիպում են ամբոխների տեսողութիւնից եւ միշտ մնում ծածուկ, եւ բանակները շարժւում են շատ յաճախ դրաւիչ պատրուակներով։

Պոնտոսի հետ իր հաշիւները կարգադրելէն ետքը ընչաքաղց Հռոմը իր դիշատիչ հայեացքը ուղղել էր դէպի Հայաստան։ Տիգրան այդ շատ լաւ գիտէր ու շատ շուտ ըմբռնեց, որ Լուկուլլոսի հանդէպ նուաստացումներ ընդունել եւ կամ խեղճանալ ու ստորնանալ ոչ միայն անարժան է իր արքայական փառքին եւ քաղաքական վարկին, այլ եւ միանգամայն անօգուտ է իր եւ իր պետութեան խաղաղութեան համար։ Եւ Հռոմի մարտահրաւէրը նա ընդունեց արքայավայել եղանակով։

Այս պատերազմի ելքը Հայաստանի համար ձախող եղաւ։ Լուկուլլոս եւ իրեն յաջորդող Պոմպէոս Հռոմի փառքն ու զօրութիւնը Պոնտոսից յետոյ Հայաստանում բարձրացրին։ Քիչ վերեւ մենք տեսանք, որ դա անխուսափելի էր շատ պատճառներով։

Սպասո՞ւմ էր արդեօք Տիգրան այս հետեւանքներին։ Հաւանաբար ոչ։ Բայց, ինչ եւ լինէր, նա չէր կարող առանց կռուի գլուխ ծռել Հռոմին։ Այլապէս, ինքն իր ձեռքով պէտք է քանդէր քսանհինգ տարուայ ճիգերով բարձրացուած՝ հսկայ ու փառաւոր կայսրութեան կառուցուածքը։

Ի դէպ է այստեղ յիշատակել, որ Տիգրան Մեծի այս բախտորոշ «ոչ»ը, որպէս մեր ցեղային խառնուածքի արտայայտութիւն, յետագային մեր պատմութեան ամենէն տագնապալի շրջաններում մի ապշեցուցիչ զուգադիպութեամբ կրկնուեց։ Ամէն անգամ, որ հայ ժողովուրդը կոչուեց իր վճռական խօսքն ասելու իր հայրենիքի անկախութեան կամ օտար բռնաւորին համակերպուելու մէջ, նրա պատասխանը միշտ եղաւ մի կուռ ու դիտակից՝ «ո՛չ»։

Այսպէս, Տիգրան Մեծից մօտ հինգ դար յետոյ, երբ պարսից՝ Յազկերտ Բ. պահանջեց հայ ժողովուրդից իր խղճմտանքի եւ իր ազատութեան ուրացումը, հայ ազգը մէկ անձի պէս վերստին ծառացաւ եւ արտասանեց իր արհամարհական ու համարձակ՝ «ոչ»ը։ Եւ 451 թուին Աշտիշատի հայոց ազգային ժողովը, հակառակ արտասովոր, դժուարին պարագաներին, անմիջապէս զտաւ իր ազգային հերոսը, որ մարմնացնում էր ցեղի կամքը եւ Վարդանի հզօր ոգի մէջ դրեց հայկական հինաւուրց սուսերը։

Եւ այնուհետեւ, քանի՞ քանի անգամ, հայ ժողովուրդը, յաճախ անգլուխ, իր հայրենիքը բաժան, բաժան՝ ոտքի ելաւ հզօրագոյն թշնամիների դէմ իր ազատութեան եւ իր արդար, անկաշկանդ խղճմտանքի համար։

Թող յիշատակեմ, դրանցից դէթ ամենավերջինը, մեր օրերում, մեր աչքի առջեւ կատարուածը, որ այնպէս յիշեցնում է Վարդանանց նուիրական պատերազմը։ Խօսքս 1918-ի գարնան, Ալեքսանդրապոլում դումարուած Հայոց Ազգ. Ժողովի մասին է։ Ռուսները խոյս տուած Կովկասից, մեր շրջապատի հարեւանները մեր դէմ, Թրքական արշաւը սպառնական ստաջխաղացութեամբ դէպի մեր սահմաններն եւ մեր բանակը թէեւ անձնուէր, արի, բայց սակաւաթիւ ու տակաւին մատաղ. եւ ահա, այդ տագնապալի ժամին ազգի ներկայացուցիչները, ինչպէս հինգերորդ դարում, կոչուած են ընդունելու պայքար կամ ստրկութիւն։ Թուրքը պահանջում է ընդունել Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը։ «Ո՛Չ», վերստին պատասխանում է Հայոց Ազգային Ժողովը միաձայն եւ ընդունում է պատերազմը թշնամու դերազանց ուժերի դէմ։

Ցեռին թուով քաջահմուտ դիւանագէտներ կը ծնին, որոնք կը փորձեն զուցէ ստուեր